

Կարտոֆիլ - Ջավախքի «Երկրորդ հաց»

Ավելի քան երեք շաբաթ է, ինչ Ջավախքում սկսվել է կարտոֆիլի բերքահավաքը: Տեղական լրատվամիջոցներն ակտիվորեն լուսաբանում են այս գործընթացը և շատ են գրում տեղացիների առջև ծառացած դժվարությունների մասին: Գարնանը լրատվամիջոցները և սոցիալական ցանցերում տարածված էր տեղի գյուղացիների բողոք, քանի որ Նրանք ցուցադրաբար աղպանոցներում թափում էին փչացած կարտոֆիլը՝ այսպիսով ևս մեկ անգամ ընդգծելով սեփական աշխատանքի թերագնահատումն ու չճանաչումը:

Այս բլոգում ուզում եմ կենտրոնանալ մի քանի սոցիալական և գիտական գործոնների վրա, որոնք, կարծում եմ, տեղի կարտոֆիլագործների դժգոհության ու անհանգստության պատճառ են հանդիսանում և պահանջում են պետական միջամտություն:

Այս բլոգը պատրաստելու համար ես հանդիպեցի տեղի գյուղացիների/ինքնագթաղ կարտոֆիլագործների հետ, և իմ կարծիքների մեծ մասը հիմնված է Նրանց մտքերի և տեսլականների վրա:

Վրաստանում կարտոֆիլը հանդիսանում է կարևոր մշակաբույս: Մեր երկրում ցանում է մոտ 25000 - 30000 հա կարտոֆիլ: Կարտոֆիլի ստացված բերքի մեծ մասը սպառվում է իր առաջնային տեսքով: Ջավախքում կարտոֆիլը հաճախ անվանում են «Երկրորդ հաց» անվանումով: Չնայած երկրում կարտոֆիլի բերքատվության ընդհանուր աճին, Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում դրա մշակման տեմպերը մնում են ցածր՝ մոտ 12-15 տ/հա, ինչը զգալիորեն ցածր է եվրոպական շատ երկրներում նմանատիպ ցուցանիշներից (առնվազն 40 տ/հա-ից):

Պատճառները հետևյալն են: Կարտոֆիլի բերքի ցածր արտադրողականության ու քիչ շահույթի ստանալու առաջին և գլխավոր պատճառը, անորակ սերմացուն և ցածր բերքատվություն ունեցող կարտոֆիլի տեսականին է: Մեր երկրում դրսից ներմուծվում են կարտոֆիլի սերմացուի տեսակներ, որոնք 2-3 տարի հետո դառնում են անպիտան, և դա կտրուկ նվազեցնում է բերքի բերքատվությունն ու որակը: Վրաստանում չունենք կարտոֆիլի սերմացուի սեփական արտադրություն, իսկ դրսից ներկրվող սերմացուը շատ թանկ արժե (3-4 լարի):

Ընդամենը մի քանի տարի առաջ Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում կարտոֆիլագործների մեծ մասն օգտագործում էր ոչ ֆորմալ սերմացու, որպես կարտոֆիլի սերմացուի աղբյուր (օրինակ՝ տեղի տնտեսություններում աճեցված սերմեր, որոնք ձեռք են բերվել հարևաններից կամ տեղական շուկայից և այլն): Իհարկե, նմանատիպ սերմերը վերարտադրված են և արտադրողականության զգալի անկում են առաջացնում: Հետևաբար ստանում ենք ցածր արտադրողականության բերք:

Տեղացի կարտոֆիլագործների ինձ հետ խոսելիս, հիշում են, որ խորհրդային տարիներին 1 հա հողամասից ավելի շատ բերք էին հավաքում, քան այսօր: Նրանց խոսքով, օրինակ, այդ ընթացքում (խորհրդային միության ժամանակ) Ախալքալաքի շրջանի Բուդղաշեն գյուղում մեկ հեկտարից հավաքվել է 50 տոննա կարտոֆիլ: Ես լիովին հասկանում եմ, թե ինչու է խորհրդային Միությունը մասին մեր գյուղացիների խոսում դրական ենթատեքստով: Ցավալի է, բայց Վրաստանի ոչ մի կառավարություն չկարողացավ սեփական քաղաքացիների համար ստեղծել ավելի լավ սոցիալ-տնտեսական պայմաններ, քան հաջողվել է վերը նշված համակարգին:

Կարևոր է, որ պետական/կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինները սկսեն աշխատել տեղական ֆերմերների/ինքնագաղվածների հետ՝ մեր երկրում լավ որակի, էլիտար կարտոֆիլի սերմեր արտադրելու համար: Այս գործընթացը կնվազեցնի, կարտոֆիլի սերմերի նոր տեսակների արժեքը և կբարձրացնի բերքատվությունը: Պետական համապատասխան մարմինները պետք է ապահովեն երկրում կարտոֆիլագործների և ինքնագաղված քաղաքացիների եկամուտների բարձրացումը, արդյունավետ սորտերի սերմացուի որակի բարձրացումը և ֆերմերները վերապատրաստվեն լավագույն փորձի համապատասխան: Հակառակ դեպքում գյուղացու աշխատանքը նորից ջուրը կնգնի: Համաճարակի հետևանքով ստեղծված ճգնաժամը ցույց տվեց նաև, որ գյուղատնտեսությունն ու պարենային անվտանգությունը պետք է լինեն ամենակարևոր առաջնահերթությունները: Նինոծմինդայի և Ախալքալաքի մունիցիպալիտետները գտնվում են լեռնային շրջանում, և այստեղ որակյալ սերմացու արտադրելու մեծ հնարավորություն կա: Կարևոր է այս դաշտի ստեղծումն ու զարգացումը համապատասխան պետական կառույցների և տեղացիների ներգրավմամբ: Իրականում Ջավախքի գյուղերի համար, որոնք գտնվում են ծովի մակարդակից 1800-ից 2000 մետր բարձրության վրա, կարտոֆիլագործությամբ զբաղվելն անշահավետ է, իսկ կարտոֆիլի սերմացուի արտադրությունը կարող է դառնալ ավելի հետաքրքիր ու ավելի շահավետ: Համեմատաբար ցածր գյուղերի համար (1500-1700 մետր բարձրության վրա գտնվող), իհարկե, իդեալական պայմաններ են բարձրադիր վայրերում արտադրվող սերմնանացուի օգտագործումն ու մշակումը: Ուշագրավ է մեկ այլ հանգամանք, որակյալ և էժան սերմացուի մշակումը կհանգեցնի նրան, որ 80 տոննա կարտոֆիլի բերք ստանալու համար կպահանջվի ոչ թե 5 հա հողատարածք, այլ առավելագույնս 2 հա, ինչը ընդհանուր առմամբ կբարձրացնի արտադրողականությունն: Նշեմ նաև, որ Նինոծմինդայի Ախալքալաքի մունիցիպալիտետների գյուղերի մեծ մասում էական խնդիր է ոռոգման ջրի համակարգի բացակայությունը: Չնայած նրան, որ երկու մունիցիպալիտետն էլ հսկայական ջրային պաշարներ ունեն: Մեր շրջանը հարուստ է լճերով, գետերով, բայց այդ ռեսուրսները չեն օգտագործվում տեղաբնակների կենսական շահերի համար: Դաժան կլիմայական պայմաններում, լեռնային դաշտերում կարտոֆիլ աճեցնելու համար գիշեր-ցերեկ աշխատող մեր ժողովուրդը մնացել է առանց ոռոգման ջրի: Ինչպե՞ս կարելի է արդարացի համարել այս իրողությունը?!

Ջավախքում չկան կարտոֆիլի վերամշակման գործարաններ և ժամանակակից տեխնոլոգիաներ, սա ևս մեկ կարևոր խնդիր է, որը թույլ չի տալիս գյուղատնտեսության զարգացումը: Մեր գյուղացիները հողը մշակում են պարզունակ տեխնոլոգիաներով ու մոտեցումներով և գոյատևման համար պայքարում սեփական քրտինքի ու տքնաջան, անգնահատելի աշխատանքի գնով: Ինչպե՞ս կարող է գյուղացին/դեռ ի՞նչքան պետք է հողը մշակի պարզունակ գործիքներով և սարքավորումներով, հատկապես, երբ գյուղատնտեսությունը Ջավախքի տարածաշրջանի կյանքի նյութական հիմքն է:

Կառավարությունները շատ են խոսում գյուղատնտեսությանն աջակցելու մասին, բայց մենք պետք է տեսնենք այս համակարգի աշխատանքը մեր ընտանիքների և գյուղացիների իրական կյանքից: Ցավոք սրտի, ներքևում իրական փոփոխություններ չեն երևում, և մեր գյուղացիները շատ են աշխատում, ես կասեի, հողի հետ կռիվ են տալիս «երկրորդ հացը» վաստակելու համար: